

**“ԵՐԱՆԻ՝ ԱՆՈՆՅ, ՈՐ ՄԱՔՈՒՐ ԵՆ ՍՐՏՈՎ,
ՈՐՈՎՅԵՏԵՒ ԱՆՈՆՔ
ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ ԶԱՍՏՈՒԱԾ՝”**

1. Բրիստոս՝ Պատկերը Աներեւոյթ Աստուծոյ
2. Վերարծարծում
3. Փառամոլութեան Զգտումը
4. Բրիստոսի Աղաչանքը
5. Օրէնքէն Յովտ Մը Կամ Կշանագիր Վը
Պիտի Զ'անցնի

BLESSED AND HAPPY ARE THE PURE IN HEART,
FOR THEY SHALL SEE GOD!

**ԱԼՊԷՌ ԵՐԵՄՅԱՆԻ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2009**

ՔՐԻՍՏՈՍ՝ ՊԱՏԿԵՐԸ ԱՆԵՐԵՒՈՅԹ ԱՍՏՈՒԾՈՅ

Գիրն ու գրականութիւնը աներեւոյթ մտածումներու և խոր-
հուրդներու պատկերացումներն են: Պատկերը էութեան մը, իսկու-
թեան մը ճշմարիտ բնոյթին և իրականութեան *ցայտուի* և տեսա-
նելի նկարագրութիւնն է: Ինչպէս հեռատեսիլ կազմածը օղէն
արձակուած լոյսի մասնիկները կապտելով ու համադրելով մեզի կը
ներկայացնէ դէպքերն ու եղելութիւնները որպէս կենդանի
պատահարներ, Յիսուս Զրիստոս եւս, Իր Մարմնացեալ ապրումով,
նուիրումով և անսպառ սիրով պատկերեց Հայր Աստուածը
աշխարհամարդուն:

«Աներեւոյթ» բառը *անգոյ*, չի նշանակեր, այլ չ'երեւցող, մեր
տեսողութեան անմատչելի: Տիեզերքի մէջ կան բազմաթիւ աներե-
ւոյթ ճառագայթներ, որոնք տեսանելի կը դառնան միայն մասնաւոր
գործիքներու օժանդակութեամբ, ու կան նաեւ աներեւոյթ զօրու-
թիւններ: Լուսնի հակառակ կիսագունդը աներեւոյթ կը մնայ
մարդկային տեսողութեան: Որեւէ բան երբ կորսուի, աներեւոյթ կը
դառնայ, բայց կորսուածը և անյայտը, գոյութենէ չեն դադիր,
մեզի՛ համար աներեւոյթ են, թերութիւնը մե՛ր բովն է, մե՛ր
տկարութեան պատճառաւ անոնք աներեւոյթ են:

Նոյնպէս ալ Աստուած աներեւոյթ կը մնայ մարդ արարած-
ներուն, ո՛չ որովհետեւ չի՛ կամիր յայտնաբանել Ինքզինք, այլ մեր
անսուրբ՝ կեղծաւոր, փառասէր, հեջտամոլ ու ագահ կացութիւնը չի՛
թողատրեր տեսնել Ջայն: Աստուած տեսնելու առանձնաջնորհը
տրուած է մարդ արարածին Յիսուս Զրիստոսի Մարդեղութեամբ,
Անոր մարմնաւորութեամբ և ապրումով ու պատուիրաններով:

***«Երանի՛ անոնց, որ մահուր են սրտով, որովհետեւ
անոնք զԱստուած պիտի տեսնեն»***.-Մատթ. Ե. 8:

Նոյնիսկ մեր նախնիներուն աներեւոյթ հոգիները հոն են
աստուածային *գիտակցութեան* և ճանաչումին մէջ: Որովհետեւ երբ
Աստուած կ'ըսէ, *«ես Արքանաւի, Իսահակի և Տալոթի Աստուածն եմ»*,
Ան ըսել կ'ուզէ, մեզի (մարդկութեան համար) մահացած և
աներեւութացած նախահայրերը կերպով մը, տեսանելի և ճանաչելի
են Աստուծոյ գիտակցութեան մէջ:

Յունիս 13, 1993 Թորոնթօ

Վ Ե Ր Ա Ր Ծ Ա Ր Ծ Ե Լ

Մարդկային կեանքը կը ցուափայլի, կը հրավառի և կը խորանայ իր իմաստին մէջ, կամ կը դառնայ հրածեջտ մը կեանքէ որ մեզ կը տանի մահուան: Կեանքը թուլութեան ու ենթակայական ապրում մը դառնալու չէ: Մարդ էակին կեանքը ի վերջոյ խաղաղութեան իղձերու և ուազմաշունչ կիրքերու կրկէս մըն է: Մարդկային ապրումը, իսկութեան մէջ *հոգեւոր* է ու *քարոյական* սկզբունքներով կը կառավարուի: Մարդ արարածը ֆիզիքական ցանկութիւններու և հոգեկան պահանջներու պայքարամարտիկ մը դառնալու է: Ան անապատի աւազներուն մէջ թաղուած Սֆինքս մը չէ՛, այլ իր զօրեղ կամքով, հզօր մտքով, անսպառ եռանդով ու խոր հաւատքով ու սիրով նմանելու է իր Արարչին:

Մարդկային բոլոր հաստատութիւններն ու հիմնարկութիւնները եւս ենթակայ են վերոյիջեալ անխուսափելի նախասահմանութեան: Միջազգային Պատմութիւնը իր բոլոր գազանութիւններով դժուարադարձ և դժուարաբուժ եղած է դէպի բարին, բայց ո՛չ երբեք *յուսահատական*: Մարդ կրնայ տարուիլ հոսանքն ի վար դէպի մահ և կորուստ, սակայն ան ունի նաեւ գերմարդկային ազատ կամքը և ողջմտութիւնը կասեցնելու վայրէջքը ու թիալարել դէպի դժուարին հոսանքն ի վերը: Վայրէջքի հոսանքը այնքան մահացու չէ, որքան *լճացումի* մահաբուժը: Դէպի անդունդ գլտորիլը կրնայ արթնցնել գլտորուող մը, իսկ լճացնող ամլութիւնը թմրութիւն և դէպի մահ կ'առաջնորդէ անշարժացած մարդ էակը:

Ձի լճանալու, չ'ամլանալու և մահուան չ'ենթարկուելու համար մարգարէաշունչ հոգեւորականներ գգուջացուցած են մեզ հանգրստաւետ ապրելակերպէ: Ինչպէ՛ս հողը արդիւնաբեր դառնալու համար հերկուելու կարիքը ունի, նոյնպէս ալ մեր հոգեւոր հիմնարկութիւնները՝ Եկեղեցիները կարիքը ունին վերարծարծումի: Դիտե՛նք մեր անձնագրի հոգեւոր տիտանները՝ Նարեկացիներն ու Ծնորհալիները: Մեզի աւելի մօտ անվեհեր ու աշխատասէր Յովհաննէս Կոլոտ և Գրիգոր Պատրիարքները: Աւելի եւս մօտ՝ Խրիմեան Հայրիկն ու Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսները, որոնք կանգնած են որպէս հաւատքի շահակիրներ ու կը պատգամեն մեզի, քսելով:

*«Բարօրութիւնը իր հերթին անպայման կը բերէ
ծուլութիւն ու լճացում հաւատքի: Տես կլան*

*վերանորոգումը և բարենորոգումը հիմնական
պայմանն է լճացումի դէնս:*

Մեր Տէրը Զրիստոս Իր համբարունալէն անմիջապէս առաջ
խոստում մը ըրաւ Իր աջակերտներուն ըսելով.

***«Ահա տսիկ ես ձեզի հետ եմ բոլոր օրերը՝
մինչեւ աշխարհի վախճանը»***-Մատթ. ԻԸ. 20:

Յիսուս Զրիստոս Իր կեանքի գերագոյն ճակատամարտի
աղօթքին, Գեթսեմանի պարտէզին մէջ, երբ կը վերադանայ
աջակերտներուն, զանոնք կը գտնէ *թմրած ու քնացած*: Արդեօք
այսօր ալ եկեղեցիները թմրած ու քնացած չե՞ն: Ի՞նչ է ներկայ
եկեղեցիներու մտահոգութիւնը Գանատայի մէջ և այլուր: Վիճա-
կագրութիւնը ցոյց կու տայ, որ բոլորն ալ զբաղած են եկեղեցա-
շինութեան *պիւտճէն* հաւասարակշռելու գործունէութեամբ: Անտե-
ղի չէ՛ երբեք եկեղեցւոյ պիւտճէն հաւասարակշռել: Միսկան Խոր-
հուրդի առաջնահերթ զբաղում մտահոգութիւնը դրամական պիւտ-
ճէ՞ն ըլլալու է, թէ իրեն յանձնուած հաւատացեալներու հոգեւոր
որպիսութիւնը: Եկեղեցին դրամատո՞ւն է, թէ աղօթքի՞ Տուն:

Ներկայիս, եկեղեցիները (բոլոր յարանուանութիւնները միա-
սին) որքա՞ն հետաքրքրուած են Աստուծոյ Տան իսկական կարիքով՝
աղօթքի, հոգեւոր չափահասութեան, սուրբ Գրոց ուսումնասիրու-
թեամբ և թերահաւատները հաւատքի բերելով: Եկեղեցին կազմուած
է զանազան դասակարգի հաւատացեալներով՝ վարչակարգային ըլլա-
լէ աւելի իտելալական է ան: Հաւատացեալին ջանքը և ձգտումը
սրբութիւն, հոգիի մաքրութիւն և Աստուծոյ հետ հաղորդութիւն
ըլլալու է.

*«Եւ խաղաղութեան Աստուածը թող ինձ սրբացնէ ձեզ
կատարելապէս. և ձեր ամբողջ հոգին, ջու նչն ու մար-
մինը անարատ թող պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս
Զրիստոսի Գալուստը»*-Ա. Թեասղ. Ե. 23:

Այսօրուան եկեղեցիները, առանելաբար ճանչցուած են որպէս
անտողներ, ու ոչ *տուողներ*: Ճաշկերոյթներով, պարահանդէսներով
և պագարներով կը ջանան ուռուցիկ տոմսակներ ծախել որպէս
նուիրատուութիւն: Ուրիշներ, հեռատեսիլի վրայ ձայներիգներ և
գիրքեր կը վաճառեն: Արդեօք եկեղեցին վաճառատուն մը չէ՞
դարձած: Վարդապետաց Վարդապետը ըսաւ Իր աջակերտներուն.

«Ջրի առած է՛ք, ձրի՛ ալ տուէ՛ք: Ձեր գօտիներուն մէջ մի՛ ու նենա՛ք ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ և ո՛չ ալ պղինձ...»-Մատթ.Ժ. 8:

Քրիստոսի եկեղեցին չի կրնար մեծնալ խորհով և բարձրութեամբ, *պատահականօրէն* կատարուող գործունեութիւններով: Առաքեալները, Քրիստոսի գործունեութեան ակնաստեսները ըսած են.

«Աստուծոյ հօտը որ ձեր մէջ է, տարածեցէ՛ք, վերակացու ըլլալով ոչ թէ ակամայ, այլ կամաւ, ոչ թէ անատակ ջանախրնորութեամբ, այլ յօժարութեամբ».-Ա. Պետ. Ե. 2, Մատթ. ԻԳ. 2:

Եկեղեցին վառարանն է աշխատութեան և *ժառայութեան*: Ան Աստուծոյ անձնուրաց խորհրդանշանն է երկրի վրայ: Ան կանչուած է դառնալու ժողովուրդին խիղճը, ընկճուածներու պաշտպանը, Աետարանի յաւիտենական քարոզիչը և դժուարութեան ժամանակ մարդոց Մխիթարիչը: Այլ խօսքով, ոչ թէ *առնող* մը այլ՝ *տուող* մը:

Կարծր հողի վրայ սերմանուած սերմերը կը դառնան երկինքի թռչուններուն կեր: Կարծրացած հիմնարկութիւն մը, անկարեկիր ու լճացած եկեղեցի մը, բարեբեր և արգաւանդ դառնալու համար կարիքը ունի հերկուելու:

Վերարծարծումը եկեղեցւոյ կեանքին մէջ աստուածաբաշխ *արթնութիւնն* է, որ ժամանակ առ ժամանակ մեզ կ'արթնցնէ: 18-րդ, Միսէոն Ա. Կաթողիկոս, ինչպէս նաեւ Պոլսոյ երկու ձայ Պատրիարքներ՝ Կոլոս և Նալեան, իրենց հոգեւոր մշակութային գործով ճամբայ հարթեցին Հայկական Զարթօնքին: Յովհաննէս Կոլոս և ընկերը Գրիգոր, կրօնական գիտութեան ծարաւի երկու երիտասարդներ, մտքի և սրտի ընտիր պաշարով օժտուած նուիրեցին իրենք զիրենք հոգեւոր գործունեութեան: Կոլոս 1715-ին բազմեցաւ Կ. Պոլսոյ պատրիարքական Աթոռը և Գրիգորը ընտրել տուաւ պատրիարք Ա. Երուսաղէմի վանքին: Կոլոս Պատրիարք բազմաթիւ աստուածաբանական մեծահատոր գործեր երոպական լեզուներէ հայերէնի թարգմանել տուաւ Խարբերոցի Ղուկաս Վարդապետ Աբրահամեանի ձեռքով, դպրատան մատենադարանին համար, իսկ ***դրամը հոգաց իր բաւկէն***: Ան հանգանակութիւն չ'ըրաւ:

Պոլսոյ ձայ եկեղեցին ու հայութիւնը կերպարանափոխ եղաւ իր օրով, Հոգեւոր գործը տիրեց հոն, ու Կոլոսի մահէն ետքն ալ շարունակեց: Այսօր եւս եկեղեցին կարիքը ունի Կոլոս և Նալեան Պատրիարքի նման ձայ հիմնարկութիւնները հերկող անձնուրաց մշակներու: Մի միայն *հերկելո՛ւ՛մ*, կարծրացած ու նախապաշար-

ւած մտքերը ակօսելով, և վերաբժարածելով պիտի ունենանք հոգեւոր
զարթօնք և չոգեգալուստ ներշնչող եկեղեցիներ:

Եկեղեցին *Ինչ* մը չէ՛, այլ *Մի՛* է ան: Եկեղեցին ժամադրա-
վայրն է, ուր Աստուած և մարդ կը խօսին ու կը սրտակցին իրարու
հետ: Ան աղօթքի տունէն դուրս, պարտ է նաեւ, որ յատկանշուի
գերազանցապէս իբր բարոյական հեղինակութիւն: Չի բաւեր եկե-
ղեցին ունենալ, պէտք է եկեղեցին *ԱՊՐԻ՛Ն*:

Իմ եկեղեցիին Պատկերը կազմուած է ինծի պէս
անձերէ.-

«Կ'ունենայ՝ Եթէ ես տամ:
Ընկերային է՝ Եթէ ես ընկերային եմ.
Քաղցր է՝ Եթէ ես քաղցր եմ.
Ներող է՝ Եթէ ես ներող եմ.
Առատաձեռն է՝ Եթէ ես առատաձեռն եմ.
Գործօն է՝ Եթէ ես գործօն եմ.
Փրկուած է՝ Եթէ ես փրկուած եմ.
Սուրբ չոգիով լեցուն է՝ Եթէ ես լեցուն եմ.
Աղօթող է՝ Եթէ ես աղօթող եմ.
Եկեղեցիս այն է՝ Ինչ որ եմ ես:»

Նոյեմբեր 23, 1995
Թորոնթօ

ՓԱՌԱՄՈՒՆՈՒԹԵԱՆ ԶԳՏՈՒՄԸ

**“Նստինք բու փառփող մէջ՝ մեզմէ մէկը աջ
կողմդ և միւսը ձախ կողմդ”**--Մարկ. Ժ. 37, Մատթ. Ի. 23:

*«Ա՜՛ն Յիսուս Փրկիչ, կը սիրեմք քեզ, Բուն ես իմ Տէրս և
այսպէս, Բուն ես իմ պարծանեմ, իմ մտածումս և վկայութիւնս:
Կը բաղձամ ըլլալ հոչակաւոր և հանրածանօթ: Ա՜՛կ Յիսուս,
դարձն՛ւր զիս հանրահոչակ որ կարենամ վկայել քեզ հազարա-
ւորներու և հաւայն մարդկութեան...»*

Որքա՞ն բնական ու մարդկային է սոյն բաղձանքն ու տենչը
հաւայն մարդկային պատմութեան մէջ, ըլլայ ան ազգային, ընկերա-
յին կամ անհատական իրազորութումներու համար:

Մարդ արարածին՝ ինքզինք ճանչցնելու և արտայայտելու
տենչը կը սկսի իր ծնունդով: Բոլոր շնչաւոր կենդանիներուն մէջ,
մի միայն նորածին մարդն է, որ կը ճչայ և կը հեկեկայ: Ոչ թէ
բանի մը կարօտ ըլլալուն համար, այլ՝ կը ճուայ ու կը ճչայ ըսելու
համար, *«ինձի՛ նայեցէ՛ք, ե՛ս ալ մէկն եմ, ես, ե՛ս եմ»*: Երբ երախայ
մը բան մը գործէ, իր չորս դին կը դիտէ որ զինք ծափահարեն: Երբ
չափահաս է, կ'ուզէ իր ընկերներուն մէջ երեւելիներէն ըլլալ:
Առեւտուրի ասպարէզին մէջ՝ կ'աշխատի մեծահարուստ դառնալ
որպէսզի կազմակերպութիւններու մէջ բաղաճական կամ բարեգոր-
ծական, իր կամքը բալեցնէ: Արուեստի և մտաւորական հրապա-
րակին մէջ, իր նիւթական օժանդակութեան կը դիմէ հոչակաւոր
դառնալու համար: Մարդ արարածը փառամոլ է իր ծնունդով:

Վերոյիշեալ փառասիրութիւնը արտասովոր կամ զարմանալի
չթուի հաւատացեալներու հոգեւոր կեանքին մէջ ալ: Մարդու
ոգեղէն հիւսկէն խառնուրդն է հողեղէն և մարմնական նախա-
նիւթերով: Մարդու մեղանչումը իր Արարիչին դէմ անօրէնութիւն է:
Սակայն մարդկային բոլոր մեղանչումները մահացու անօրէնութիւն
չեն, այլ՝ ոմանք իր ազատ կամքին սխա՛լ գործածութիւնն է: Ո՞ր
երախան, պատանին կամ չափահասը իր ծնողքին դէմ չի գործեր,
գիտակցօրէն կամ անգիտակցօրէն: Միթէ ծնողք մը իր հարազատը
կը վտարէ՞ տունէն անոր անհնազանդութեան պատճառաւ թէ կը
խրատէ զայն: Ո՞ր ծնողքը պիտի փափաքի ունենալ զաւակ մը որ
ամէն հարցի մէջ ըլլայ կրաւորական, առանց փորձելու իր
երկնաբաշխ ազատ կամքը: Զաւակ մը իր ազատ կամքը փորձելու և
գործածելու ընթացքին, անշո՛ւշտ թէ զարտուղի և յաճախ ալ հակա-
ռակ և եսասեր կամայապաշտութիւն արտայայտէ: Մտածումի և

տրամաբանութեան վէճեր ծագին ուր խուով և բարկութիւն,
յանդիմանութիւն և պատիժ տեղի չունենան: Կա՞յ ընտանիք մը
արդեօք ուր սոյն դէպքերը, սիրտհատնումները և հոգի մաշեցնող
ցաւեր տեղի չեն ունենար: Կաւաջէն աստուածաստեղծ մարդը
ոգեղէն հրեջտակ մը չէ՛, և ոչ ալ մարդ կ'ապրի Աստուծոյ
Արքայութեան մէջ այսօր:

Աստուած ներող է մարդոց անօրէնութեան, որովհետեւ մարդ-
արարած՝ իր մեղանչումներովը կը սորվի օգտագործել իր ազատ և
աստուածատուր կամքը: Մարդկային ազատ կամքը, նախածրագ-
րուած ու յայտագրուած մարդուն տրուած պարգեւ մը չէ, այլ՝
մարդուն ընծայուած անյայտագիր ջնորհ մըն է, որ մարդ ի՛նք
մտադրէ և որոշէ իր ուղեգիծը: Ազատ կամքի փորձարկութեան
գործընթացի՛ն մէջ գործուած սխալներն ու մեղանչումներն են,
որոնք Աստուած կը ներէ, և հակառակ մարդոց մեղաւոր և
մեղանչական մղումներուն, Ան երկայնամիտ է իրենց ու կը սիրէ
զիրենք անսպառ սիրով մը:

Վերոյիջեալ փառասիրութեան տենչացող աշակերտները՝
երկրորդական կամ երրորդական դասի պատկանեալները չէին, այլ՝
առաջնահերթ ու Յիսուսի պայծարակերպութեան հաղորդ Յովհան-
նէս և Յակոբոս եղբայրներն էին: Մեծամտութիւնը Բայլամուրը և
սողոսկող մեղք մըն է, որ ենթական ակամայ կրնայ գործել առանց
զիտնալու թէ կը թակարդուի: Նոյնիսկ փառամուրութեան ախտին
մէջ, ենթական իր հոգեւոր ախտանշանը չի տեսներ:

Այս պատճառաւ է, որ Յիսուս չի հանդիմաներ և չի սաստեր
Յովհաննէսն ու Յակոբոս եղբայրները, այլ՝ Բաղքահամբոյրօրէն
կ'ըսէ.

*«Տէ՛ք զիտեր թէ ի՛նչ կը խնդրէ՛ք, կրնա՞ք խմել այն բաժակը,
զոր ես պիտի խմեմ. կամ՝ մկրտուի՞լ այն մկրտութեամբ, որով ես
պիտի մկրտուիմ».* Ըսին անոր, *«կրնանք».*

Յիսուս իմանալով հանդերձ Իր աշակերտներուն սղայական
պատասխանը, չզայրանար անոնց և համբերութեամբ կ'ըսէ.

***«Իմ աջ և ձախ կողմս նստեցնելը ես չէ
որ պիտի տամ, այլ տրուելու է անոնց,
որոնց համար պատրաստուած է»***--Մարկ. Ժ. 40:

Յովհաննէսի և Յակոբոսի փառամուրութեան, փոխանակ Յիսուս
Ի՛նք սրդողելու, կը բարկանան աշակերտները, որ իրենց հետ
ընտրուող և իրենց համահաւասար աշակերտներ կը յանդգնին

իրենք զիրենք տեղաւորել կարեւորագոյն դիրքերու վրայ Աստուծոյ Թագաւորութեան մէջ:

Այս պատահարի ընթացքին, բացայայտ կերպով կը յայտնուի աստուածային անոխակալ սերն ու ներողամտութիւնը հանդէպ մարդէակին սիրոյ և հասկացողութեան պակասը հանդէպ իր ընկերին:

Երկու եղբայրներու խակ և անփորձ խնդրանքը, փոխանակ նեղացնելու Յիսուսը, առիթ մը կը ստեղծէ որ Ան առարկայական խրատ և խորհուրդ մը տայ թէ՛ Իր աջակերտներուն և թէ՛ յաջորդող հաւատացեալներուն՝ մեզի:

Յիսուսի յետագայ պատուերներն ու յորդորանքներն են, որ կերտեցին մարդաշխարհի մտածելակերպին դարձակետը: Նախա-Քրիստոս դարերու իմաստասերները, մարգարէները և բանաստեղծները գովասանքը տարփողած էին բունասիրութեան և բունաշխատութեան: Յիսուս Քրիստոս ոչ միայն *տեսութիւն* մը փարոզեց նման յոյն և հեթանոս իմաստասերներուն, այլ՝ մարդկութեան հոգեկան հասկացողութիւնը Իր հոգիին մէջ փոխադրելով ճանչցաւ մարդկային դիւրաբեկութիւնը, և դարձաւ Միջնորդ Իր Հօր և մարդոց միջեւ: Ոչ միայն միջնորդելու մարդը՝ Աստուծոյ՝ այլ՝ բացատրելու և բացայայտելու Հօր Աստուծոյ սիրավատ սիրտը և ձրի թողութիւնը համայն մարդկութեան:

Յիսուսի, *Ժառանգութեան*, յորդորը Իր աջակերտներուն, աննախատեսելի և անըմբռնելի է թէ՛ Իր ժամանակագրական մտայնութեան և թէ՛ ներկայ դարու ազահ և անձնակերտն բանականութեան համար, ուր *«անհատին իրաւունք»* դարձած է պաշտամունքի առարկայ փոխանակ ինքնապաշտպանութիւն:

Մինչեւ տասնեակ մը տարիներ առաջ, գօրութիւնը կը չափուէր զէնքերու և թնդանօթներու մեծութեամբ: Իսկ այսօր, գերագոյն գօրութեան ուժը կը գտնուի հիւլէական (ամենափոքր անբաղադրելի ադոմ տարրի) գօրութեան մէջ: Յիսուս յայտնեց Իր հիւլէական զէնքը որ կը ջախջախէ չարն ու մեղանչական մղումները ըսելով.

***«ձեզմէ ով որ ուզէ մեծ ըլլալ՝ ձեր սպասաւորը
թող ըլլայ. և ձեզմէ ով որ ուզէ առաջին ըլլալ՝
բոլորին ծառայ թող ըլլայ»:*** Մար. Ժ. 43:

Ահաւասիկ իսկական մեծութեան և առաջնութեան գաղտնիքը՝ դառնալ սպասաւոր և ծառայ: Վերոյիջեալ գաղտնիքը հասկնալի է միայն հոգեկան՝ **փորձարկութեամբ**:

**Սեպտ. 28, 1990
Լոնտոն, Անգլիա**

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՂԱԶԱՆՔԸ

Յիսուս Զրիստոս ինչո՞ւ կ'աղաչէ աջակերտներուն ըսելով.

«Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաեւ ինձի»

--Յով. ԺԴ. 1

Զրիստոս աշխարհ եկաւ յայտարարելու *նոր պատուիրան* մը, որ մենք այսօր կը կոչենք "Աւետարան": Ի՞նչ է պատճառը, որ Աւետարանը այսօր կը կարդացուի *ոտի՛ր՝ վրայ*, որպէս յարգանքի ու մեծարանքի նշան, իսկ միւս գրութիւնները նստած: Զրիստոսի նոր պատուիրանը կը գերազանցէ՛ բոլոր Հին Կտակարանի (մարգարէներու օրէնքներն ու պատուէրները): Զրիստոս չի ստորադասեց Հին Կտակարանը (Օրէնք)ը, այլ՝ աւելի գերադասը (հոգեղէն)ը ցոյց տուաւ մարդոց, ըսելով.

«Լսած է՛ք արդարեա թէ՛ ինչ ըսուած է սիրէ՛ ընկերոյ և ասէ՛ թշնամիոյ: Իսկ ես կ'ըսեմ ձեզի՝ սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէ՛ք ձեզ ատողներուն և աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն, որպէսզի ըլլա՛ք որդիները ձեր Հօր, որ երկինքն է»--Մատթ. Ե. 43-45:

Որովհետեւ գութ ու ողորմութիւն առ թշնամին, *գերմարդկային* են և աստուածամանութեան կ'առաջնորդեն: Ողորմածութիւնը իր վերջնական ձեւը Զրիստոսի Աւետարանի՛ն մէջ գտած է որպէս գութ: Զրիստոսի արցունքահոս Աչքերը ողորմութիւն կը հայցէին Աստուծմէ, որովհետեւ Անոր աղօթքի պահը այն սրբազան ժամն էր, որ հնարաւոր չէ բացատրել, այլ պէտք է զգալ և ապրիլ:

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կիներէ՛ ծնածներու մէջ Յովնաննէս Արքայիչէն աւելի մեծը չէ ծնած: Բայց երկնքի արժապարթեան մէջ ամենէն փոքրը անկէ՛ աւելի մեծ է»--Մատթ. ԺԱ.11:

«Բայց կ'ըսեմ ձեզի, որ տանարէն աւելի մեծը կայ այստեղ (Յիսուս)»--Մատթ. ԺԲ.6: «Ահա ասիկ Յովնաննէն և Աղոմոննէն աւելի մեծը կայ այստեղ»--Ղուկ. ԺԱ. 31:

«Ներկայիս, ուրեմն, միակ կարեւոր ելութիւններն են՝ **հաւատքը, յոյսը և սէրը**. իսկ այս երեքէն մեծագոյնը՝ **ՍԷՐՆ** է» Պօղոս արտեպալ--Ա. Կորնթ. ԺԳ.13:

Զրիստոս Իր աջակերտներուն երբ ըսաւ. «Հաւատացէ՛ք Աստուծոյ **նաե՛ւ** Ինձի», նոյն խօսքերը Յիսուս ըսած եղաւ նաեւ

Պօղոս առաքելի Դամասկոսի ճամբուն վրայ, երբ լուսեղէն ու ձայնեղէն կերպով այսպէս խօսեցաւ.

***«Սօղո՛ս, Սօղո՛ս, ինչո՞ւ կը հալածես զիս:
Ես Յիսուսն եմ, որ դու ն կը հալածես»:***

Քրիստոս չյայտնուիր նման հեթանոս աստուածներու, որոնց արհեստագործական կաշիքներով, կաշիքներով և սուր, այլ Քրիստոս կը յայտնուի աղաչանօք ու սիրով: Անոր ձեռքին մէջ Ա. Իսաչելութեան *զամե-րո՛ւն* նշանները կան: Անոր նայուածքէն նոր կեանք կը ծնի և նոր ճանապարհ կը սկսի: Թշնամի ու հալածող Սօղոս Փարիսեցին դարձաւ Քրիստոսը փարոգող Պօղոս առաքելն ու նահատակը: Ծնորհիւ Յիսուսի մէկ նայուածքին, որ վայրկեանը յաւիտենա-կանութիւն դարձուց:

Քրիստոսի, *«Հաւատացէ՛ք նաեւ ինձի»* ն կը նշանակէ՝ Ինձի՛ միացէ՛ք, յարեցէ՛ք, հետեւեցէ՛ք, Ինձի ալ *զուտահեցէ՛ք* ձեր գաղտնիքը, Ինձի ալ *ապա ինեցէ՛ք*, Իմ պատուէրներո՛ւս, յորդոր-ներուս ալ համոզուեցէ՛ք այնպէ՛ս ինչպէս Աստուծոյ: Մի՛ խոսովիք այս հրահանգներուս համար:

Թովմաս, որ աւելի ուսեալ էր միւս աշակերտներէն, ըսաւ իր Վարդապետին. ***«Տէ՛ր, չեմք գիտեր ուր կ'երթաս. արդ, ինչպէ՞ս կրնանք ճամբան գիտնալ»:*** Յիսուս՝ Իր ամենա-տես աչքերով գիտէր կարողալ սրտերու գաղտնիքները ու Իր կուտակուած զգացումները, որոնք դուրս կը ժայթքէին Իր ձրթներէն և Աչքերէն ջերմ կայծերու նման, Ան ըսաւ Թովմասին ու ընտրած աշակերտներուն.

***«Ե՛ս եմ ճամբան, ճշմարտութիւնը և կեանքը:
Միայն ինձմով կարելի է Հօրս երթալ»:***

Բազմաթիւ հաւատացեալներ մէջքերում կ'ընեն վերոյիջեալ համարին. *«Միայն ինձմով»* բառերը պանծացնելու համար Յիսուս Քրիստոսի գերադասութիւնը ուրիշ մարգարէներու վրայ: Սոյն մտածումներն ու խորհուրդները շատ բարի են, սակայն վերոյիջեալ ասոյթին *կեդրոնական* իմաստն ու առնչութիւնը պարտ են բարձրացնել մարդ արարածին մտածումները դէպի աստուածային հասկացողութիւն:

Ինչո՞ւ համար Անինն Միածին Յիսուս կ'ուզէ որ մենք հաւատա՛նք ու վստահի՛նք Իրեն ալ, ինչպէս որ կը հաւատա՛նք Հա՛յր Աստուծոյ: Պատճա՞ռը:

Որովհետեւ մինչեւ Աստուածայայտութիւն (Յիսուս), մարդկութիւնը չէր ճանչցած Աստուած ճշմարիտը: Մարդկութեան ճանչցած աստուածը, մարդահնար աստուածներ էին: Յոյներ զայն կոչած էին "անծանօթ աստուած" մը: Հրեաներ՝ "Նախանձու ու վրէժխնդի՛ր աստուած" մը: Հեթանոսներ՝ "անխիղճ ու պատժո՛ղ աստուած" մը: Իմաստասէրներ՝ "Անկարեկիւր կամ անանձ" աստուած մը: Գիւցազներգակ բերթողներու և աշուղներու համար՝ աստուածները ջուայտ, հեշտասէր ու հաճոյամոլ և առասպելական դիցեր ու դիցունհիներ էին:

Յիսուս Քրիստոս Իր *Մարմնաւո՛ր և Մարդեղացեա՛լ* աստուածայայտութեամբ ջանաց լուսաւորել մարդկութեան միտքն ու սիրտը, թէ Արարի՛չ Աստուած մարդկային մտածողութեան արդիւնք կամ արտադրութիւն մը չէ՛, այլ Ա՛ն է սիեզերքի Միտքն ու մտայղացումներու Լուսաւարութիւնը: Մարդ արարած մինչեւ չ՛ըմբռնէ Աստուծոյ Հայրութիւնը՝ սիրոյ ու բարեգթութեան գործօ՛ն փորձառութիւնը, չկրնար ճանչնալ իր Արարիչը:

Հետեւաբար զԱստուած *Ճանչնալո՛ւ* համար, մարդ արարածը պարտ է հաւատալ *նաեւ* Յիսուս Քրիստոսի:

Ինչո՞ւ:

Որովհետեւ անկապտելի Մարդեղեալը, մարդկային գիտակցութիւնը միաձուլեց աստուածային գիտակցութեան հետ ու Իր սիրո՛յ, ծառայութեան ու անձնագոհութեան հոգիով ցոյց տուաւ Հա՛յր Աստուծոյ դիմագիծը համայն մարդկութեան: Ան խանդակաթ սիրով, երազուն Աչքերով, դողդոջուն Ձեռներով և փոթորկայոյզ Հոգիով ըսաւ աշակերտներուն.

«Եթէ զիս ճանչնայիք՝ Հայրս ալ պիտի ճանչնայիք»:

Յով. ԺԴ. 7:

Համազգային վկայաբանութիւն մըն է Քրիստոսի վերոյիշեալ յայտարարութիւնը թշուառ աշխարհի մը մէջ ուր մարդիկ թէ՛ մտքով խեղճ են ու նաեւ նախապաշարեալ: Փիլիպպոս որ ջատ մօտ էր Յիսուսի ու կամաւոր եղած էր յոյները առաջնորդելու Յիսուս Մարգարէին, Ծաղկազարդի օրը, կ՛րսէ իր սիրելի Վարդապետին. *«Յոյց տուր մեզի Հայրը և կը բաւէ մեզի»:* Յիսուս կը դառնայ Փիլիպպոսին ու Իր խոր ու խօսուն նայուածքով կ՛ըսէ անոր ու նաեւ բոլորին.

«Այսքան ատեն ձեզի հետ եմ և տակաւին չճանչցա՞ր զիս, Փիլիպպո՛ս: Ով որ զիս տեսաւ՝ Հայրը տեսած եղաւ, ալ ինչպէ՞ս կ՛ըսես՝ «Յոյց տուր մեզի Հայրը»--ժԴ. 9:

Յիսուս՝ Իր կենսախրախոյս նայուած՝ և հոգեշունչ ձայնով Աստուծոյ անճառելի մարդասիրութեան ու ողորմութեան ամենէն պերճախօս և համոզիչ արտայայտութիւնն է (Աւետարանը): Մարդեղեալ Յիսուս Բրիստոս կենդանացուց մարգարելութիւնները, **ապրեցա՛ւ** անոնց բացատրութիւնները և յստակացուց (առարկայակա՛ն դարձուց) երկնաւոր Հօր սէրն ու ողորմութիւնը աշխարհամարդուն:

Բրիստոս **չհրամայեց** որ Իր աշակերտները իրագործեն Իր պատուերներն ու յորդորները, այլ միայն **աղաչեց**, որ անոնք ջանան կատարել Իր կամքը, ինչպէս Ինք ալ կը կատարէր երկնաւոր Հօր կամքը: Բրիստոսի Ս. Խաչելութիւնը Գողգոթայի բարձունքին, Անոր բերանացի աղերսին ու սրտայոյզ թախանձանքին առարկայական ու շօշափելի պատկերացումն է: Բրիստոսով՝ Աստուած կը թափանցէ մարդկային իրականութիւնը ու կը յայտնէ Իր սէրն ու ողորմութիւնը, որովհետեւ մի միայն Յիսուս Որդի՛ն մարդկային ողբերգութեան սրաման ապրեցաւ և Ինքզինք շաղախեց ժողովուրդին հետ, մասնակցելով մարդկութեան թշուառութեան, տառապանքին ու անարդարութեան:

Յիսուս նախասիրեց խեղճերը, հիւանդները և աղքատները: Մեղաւորները սիրով հրաւիրեց Իր մօտ և անոնց ականջին փսփսաց, ըսելով.

«Ասկից վերջ մի՛ մեղանչեր:

Խաչին վրայ՝ Ջինք խաչողներուն ներեց: Բաան դարեր եկան ու անցան, ու տակաւին Ա՛ն կեդրոնական Դէմքն է մարդկային ցեղին: Բոլոր ազգերու խորհրդարաններու նիստերը, բոլոր թագաւորական որոշումները և վճիռները, բոլորն այնքան չազդեցին մարդու կեանքին վրայ, որքան այս անօգնական կարծուած Մարդուն կեանքը և գործը մինչեւ այսօր: Եւ ինչո՞ւ, զի Աստուած Որդի էր որ Մարդացաւ Բու և իմ սիրոյն համար: Յիսուս Բրիստոս և Սոկրատէս մեռան ճշմարտութեան համար: Սոկրատէսի համար ո՛չ մէկ տաճար կանգնած է: Բրիստոսի դաստիարակութեան ու Անձի՛ն մէջ կայ **գերբնական** հորիզոն և տարածք՝ ներկայէն դէպի ապագան՝ իմաստ, յոյս և յաւիտենական կեանք:

Յիսուս, վերոյիջեալ խօսքերը ըսելէ ու բացատրելէ յետոյ, Իր դիտող, առաջնորդող, ազդարարող, թելադրող միտքով եղաւ նաեւ գուրգուրացող Սիրտ մը: Յիսուս ջարուսակեց Իր մտերմիկ յորդորները և ըսաւ.

«Եթէ կը սիրե՛ք զիս՝ պիտի գործադրե՛ք իմ պատուիրաններս:

Եւ ես չօրս պիտի աղաչեմ՝ որ ուրիշ Միսիթարիչ մը տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ ըլլայ: Անիկա Սուրբ Հոգին է, որ ճշմարտութիւնը կը յայտնէ: Աջխարհը չի կրնար գայն ընդունիլ, որովհետեւ ո՛չ կը տեսնէ և ո՛չ ալ կը ճանչնայ գայն»:

Քրիստոսի կեդրոնական պատգամ՝ Աւետարանը, Իր աջակերտներու *միասնականութիւնն* է: Սոյն միութենականութեան համար մեր Տէրը ոչ միայն կ'աղաչէ Իր աջակերտներուն գործադրել Իր պատուիրանները, այլ սրտանց կ'աղերսէ նաեւ ըսելով. **«Եթէ կը սիրէ՞ք Զիս»**: Ան Պետրոսի ալ հարցուց նոյնանման խօսքերը ծովագերեայ ճաշկերոյթէ մը յետոյ ըսելով.

«Սիմո՛ն, Յովնանի՛ որդի, կը սիրե՞ս զիս ասոնցմէ աւելի»:

Սիրոյ այս հարցումը Յիսուս ըրաւ երեք անգամ: Քրիստոս մարդ էակը չի հրապուրեր ջօջափելի ու տեսանելի կաշառֆով, այլ մագնիսական ու հոգեկա՛ն հրապոյրով, որ անտեսանելի ու անջօջափելի է՝ Իր անձնանուէր ՄԻՐՈՎԸ: Աստուածային այս սէրը ծնունդ կը ստանայ մարդկային սրտին ու հոգւոյն մէջ, միայն Սուրբ Հոգւոյն ներգործութեամբ:

Սուրբ Հոգիին խոստումը կ'ենթադրէ *միութիւն* եղբայրներու մէջ, ու միակամ հաղորդութիւն՝ աջակերտներու (Եկեղեցիներու) միջեւ: Կարեւորութիւնը Անոր աստուածաբանական յատկանիշները չեն, այլ, Անոր **դե՛րը մեր կեանքին** մէջ, որովհետեւ Ա. Հոգին, Յիսուսը Փոխարինողն է Անոր երկրաւոր բացակայութեան ընթացքին--Յով. ԺԴ. 18, 17: *Աջխարհը չի կրնար գայն ընդունիլ, որովհետեւ ո՛չ կը տեսնէ և ո՛չ ալ կը ճանչնայ գայն*: Ինչո՞ւ, որովհետեւ աջխարհ կ'ուզէ հոգեղէնը տեսնել ու ջօջափել նիւթակա՛ն աչքերով: Քրիստոս կը ջանայ բացատրել Իր աջակերտներուն, թէ հոգեղէն տարածքը՝ իրականութիւնը մի միայն **հաւատո՛ւյ** իմանալի ու ճանաչելի կը դառնան: Մեր սիրոջ փնտրածը՝ Իրեն **ՀԱՒԱՏԱ՛Ն** է:

Հաւատքը զօրութեան մը ներշնչումն է: Մեքենական աջխարհահայեացք ունեցողներու համար, հաւատքը զառանցանք է, իսկ հաւատաւորի մը համար՝ կեա՛նք է, զօրութիւն և փրկութիւն: Հաւատքին առջեւ *գիտութիւնը* կը խոնարհի և *փիլիսոփայութիւնը* կը լռէ: Հաւատքը հոգիի անծանօթ ալիքներէն կու գայ, որուն մարդիկ ներշնչում կամ հաւատ կ'անուանեն: հաւատք առ Աստուած, տրամաբանական ըլլալու է, սակայն որեւէ տրամաբանական սահմանում անբաւարար է հաւատքին դերը կատարելու:

Տրամաբանութիւնը իր բանաւոր սահմանումը ունի, իսկ հաւատքը սահմանափակում չ'ունի: Առանց հաւատքի և հոգիի լոյսին, միտքի լոյսը սէգ ու հպարտ, ամբարտաւան, պատուհաս ու անէծք է աշխարհի:

Հաւատք առ Աստուած առանց գոհողութեան չի գործադրուիր: Հին հեթանոս կրօններուն մէջ գոհը աստուածները պատուելու լաւագոյն ձեւ մըն էր: Մանուկ երեխաներ գոհելու նպատակը գԱստուած հաճեցնել ու գոհացնել էր, լաւագոյնը տալով: Զրիստոնէութեան մէջ հաւատացեալին գոհը իր *ա՛նձն է*, իր "ե՛ս"ը, իր ծառայութիւնը ու ամենէն աւելի իր *արժանապատուութիւնը* գոհաբերելու է: Աւանդապահ մարդու գլխաւոր մտահոգութիւնը իր ընտանիքն էր, (ոչ իր անձը) իսկ արդի *«ազատագրուած»* մարդու մտահոգութեան առանցքը, առաւելաբար, իր անձին ջուրջ կը դառնայ: Արդի մարդկութեան մտայնութիւնը *պէրճամբի* ետեւէն է:

Հաւատացեալ մը երբ գոհէ՝ իր փառքը և իր պարծանքը Աստուծո՛յ ու դառնայ Անոր *աջակերտ*, Աստուած կը գործածէ զայն որպէս մշակ ու գործակից: Զրիստոսի եկեղեցին ծաւալեցաւ *առաւելաբար* կամաւոր աշխատանքի, գոհաբերութեան և *ինքնանուիրումի* ջնորհիւ: Մաշտոցեան աշակերտներ՝ գոհաբերութեամբ ու *զրկանքո՛վ*, էջ առ էջ դրոշմեցին մեսրոպատառ լեզուն ու Հայ գրականութիւնը ազգին զաւակներու հոգւոյն մէջ:

Զրիստոնէութիւնը կառուցուած է Յիսուս Զրիստոսի գոհաբերութեան խորհուրդին վրայ: Հրեաները նշան կ'ուզեն, յոյները իմաստութիւն կը փնտռեն, իսկ առաքեալները կը փարոզեն *Խաչեալ Զրիստոսը՝ անձնագոհութիւն* ու նուիրում: Ա. Պատարագը իր բառացի իմաստովն իսկ կը նշանակէ *գոհաբերութիւն*: Ծառեր կ'ուզեն Յարութիւնը, սակայն՝ առանց Խաչի գոհաբերութեան: Աստուծոյ հանդէպ մեր սերը բխելու է ոչ թէ մեր *անձնական լրումին* համար, այլ՝ Աստուծոյ գոհաբերութեան հանդէպ հաւատացեալին ունեցած սիրոյն ու նուիրումին համար: Մերը կարելի չէ բառերով արտայայտել: Մերը կ'արտայայտուի միայն գործով, արարքով և գոհաբերութիւնով: Զրիստոսի սիրոյն կարգախօսը.

***«Մեծագոյն սերը այն սերն է, որով մարդ ինձգինձ կը գոհէ իր բարեկամներու ն համար»*--ԺԵ.13:**

Ո՞ր կրօնքի, ո՞ր հաւատքի հեղինակը խօսած է սոյն *աղաչակցան* խօսքերով իր աշակերտներուն: Յիսուս Զրիստոս լուսատու հոգիով և զգայուն հոգեմտաւոր մօտեցումով ու աղերսելո՛վ կը խօսի Իր աշակերտներուն: Ան մօտեցաւ անոնց

համակրանքով և հոգածութեամբ:

Անցեալի Տիեզերական Ժողովներու հայրապետներ ի՞նչ մօտեցումով և ի՞նչ հոգիով մօտեցան իրարու: Տիեզերական Ժողովներու մէջ սիրապետող հոգին *անհանդուրժողութիւնն* էր...: Մի՛ դատապարտեր զիրենք: Ի՞նչ հոգիով և ի՞նչ մտածումներով կը մօտենանք մե՛նք այսօր մեր ազգային ու հաւատքի՛ հարցերուն: Ո՞ր է մեր մէջ Բրիտանի հանդուրժողութեան ու աղաչական հոգին:

Ի՞նչ կը նշանակէ Բրիտանի մարգարէական յորդորը երբ Ան կ'ըսէ աշակերտներուն.

«Ոչ ոք չօրը կու գայ, եթէ ոչ՝ Ինձմով»:

Բրիտան սոյն խօսքերը *փրկութեան* համար չ'ըսաւ, այլ Աստուծո՛յ մօտենալու, զԱստուած՝ ճանչնալու և աստուածանման ըլլալու համար խօսեցաւ: Կարդանք յաջորդող համարը, որ բացատրականն է նախորդ համարին.

«Եթէ ճանչնայի՛ք զիս՝ պիտի ճանչնայի՛ք նաեւ իմ Հայրս»:

Ճանչնալու համար մեր Փրկիչ Յիսուսը, ապրելո՛ւ ենք Անոր հետ, մտերմանալու ենք Անոր ձոգւոյն, համոզուելու ենք Անոր սիրոյ *յարթակա՛ն* ուժին և մասնակի՛ց ըլլալու ենք Անոր տառապանքներուն:

Ակզբնական Եկեղեցին աճեցաւ, տարածուեցաւ ու յարթահարեց չորմէական Կայսրութիւնը, ո՛չ թէ վարդապետական ու դաւանական կանոնագրութեամբ, այլ սիրոյ, հանդուրժողութեան, ծառայութեան ու անձնանուիրումի հոգին ցուցաբերելով: Յիսուս Բրիտանի Կեանքը ապրելով, Ձա՛յն վկայելով, և զիրա՛ր սիրելով:

«Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաեւ ինձի»:

20-րդ դարու մեծամիտ, ինքնահաւան ու պարծենկոտ հաւատացեալին, Յիսուս այսօ՛ր ալ կ'ըսէ. *«Հաւատացէ՛ք նաեւ Ինձի»:*

«Եկէ՛ք ինձի, քոյոր յոգնածներ և բեռնաւորս ածներ,

եւ ես պիտի հանգստացնեմ ձեզ.

Իմ լուծս ձեզ վրայ առե՛ք և տրվեցե՛ք ինձմէ.

Եր հեզ եմ և սրտով խոնարհ.

եւ ձեզ անձեղու ն հանգիստ պիտի գտնե՛ք.

Որովհետեւ իմ լուծս բաղք է և իմ բեռս թեթեւ»:

--Մատթ. ԺԱ.28-30:

Ապրիլ 5, 1996,

Ա. ազ. Ուրբաթ, Քորոնթօ

“ՕՐԷՆՔԷՆ ՅՈՎՏ ՄԸ ԿԱՍ ՆՇԱՆԱԳԻՐ ՄԸ ՊԻՏԻ Չ՝ԱՆՑՆԻ”

«Այ կարծե՛ք թէ ես եկայ Օրէնքը կամ մարգարէները արելու (Քանդելու, լուծելու), չեկայ արելու, հապա կատարելու: Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի, մինչեւ երկինք և երկիր անցնին, Օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չ'անցնի»--Մատթ. Ե. 17:

«Յիւրիս է որ երկինք ու երկիր անցնին, քան թէ Օրէնքէն մէկ նշանագիր իյնայ»--Ղուկ. ԺԶ. 17:

Քրիստոսի վերոյիջեալ խօսքերը ջատ վճռական և զօրաւոր արտայայտուած խօսքեր են՝ որ դիւրաւ չենք կրնար անտեսել: Մակայն երկու հազար տարիներէ ի վեր, Յիսուսի Եկեղեցին, Օրէնքէն կարգ մը բաներ անտեսած է և զանոնք բարեփոխած: Բարեփոխած է, ո՛չ թէ յովտ մը կամ նշանագիր մը, այլ ամբողջ կանոն մը, պատուիրան մը իր ամբողջականութեամբ: Զոր օրինակ, Ճաբաթ Օրը փոխուած է Կիրակիի, Թլփատութիւնը ջնջուած է և կարգ մը նման օրէնքներ բոլորովին լուծուած Օրէնքի դատաստանագիրքէն:

Յիսուս Ինք նաեւ Իր Բարոզնութեան շրջանին ըսած է.

*«Լսեք է՛ք որ ըսուած է, աչքի դէմ աչք,
ու ակոտայի դէմ ակոտայ: Բայց ես ձեզի կ'ըսեմ,
չարին հակառակ մի կենեմք»--Մատթ. Ե. 38:*

Յիսուս երբ Ինք օրէնքը կը յեղաշրջէ, ինչո՞ւ մեզի ատոր հակառակ պատուէր կու տայ: Միթէ Յիսուս Ինքզի՛նք կը հակառէ՞, կամ կը մոռնա՞յ Իր նախկին պատուէրները:

Ինչպէ՞ս հասկնալ Յիսուսի վերոյիջեալ խօսքերն ու պատուէրները:

Յիսուսի հետեւող առաքեալները՝ իրենց Վարդապետին պատուէրներուն և խօսքերուն ի նպատ, ոչ մեկնաբանութիւն տուած են և ոչ մեկնաբանութեան քանալին: Միակ լոյսատու կանխեղը որ ունինք, հասկնալու և ըմբռնելու Յիսուսի գաղտնաթափանց խօսքերը, կը գտնուի Յովհաննու Առաքեալին 14-րդ գլխուն 2-րդ համարին մէջ.

«Բայց Միտիթարիչը, Առար Հոգին զոր Հայրը Իմ անու նովս

պիտի ըրիլէ, Անիկա ձեզի բոլորը պիտի տրվեցնէ, և ինչ որ ձեզի ըսի՝ միտե՛րնիդ պիտի բերէ: «Ինչ էրբ Ինձ ճշմարտութեան Հոգին գայ, առէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի. վասնզի ոչ թէ Ինձ նկրմէ պիտի խօսի, հասցա ինչ որ լսէ՝ գայն պիտի խօսի ու գայի՛մնորը ձեզի պիտի պատմէ»--Յով. ԺԶ.13:

Ինչո՞ւ Յիսուս Ինձ չի լուսաբաներ Իր աշակերտները և այդ պաշտօնը կը յանձնէ Սուրբ Հոգիին:

Ինչո՞ւ Յիսուս Ինձ չէ գրած պատուիրանապահութեան կանոնագիրք, կամ հաւատքի և ապրումի Օրինագիրք, ինչպէս Մովսէս ըրած էր: Յիսուս՝ թէ՛ գրել գիտեր և թէ կարդալ, ինչո՞ւ Իր եկեղեցին ու անոր ուխտաւոր հետեւորդները երկրնտրանքի դժուարութեան մը առջեւ դրած է:

Ինչո՞ւ Նիկիական Հաւատամքը, յիսուն-հինգ երկար տարիներ տեւած է վաւերական հոչակուելու համար, որու ընթացքին բազմաթիւ սրտեր կոտորած ու շատ մը անձնուրաց և հաւատարիմ եպիսկոպոսներ բանադրուած և աքտորուած են:

Կրնանք աներեք վստահութեամբ հաւատալ որ Յիսուս ոչ թէ անտեսած է ապագայի ըլլալի՛ք պատահարները և դէպքերը, այլ այդ գործառնութիւնները *գիտակցաբար*, յանձնած է Իր հետեւորդներուն:

Մակայն ինչո՞ւ:

Եթէ Յիսուս Ինձ գրէր դատաստանագիրք մը, ինչպէս գրեց Իսլամներու առաքեալը Մուհամմէտ, մենք ալ պիտի ըլլայինք հետեւորդները գիրքի մը: Պիտի ուսումնասիրեինք միայն գիրք մը տառացիօրէն: Պիտի մոռնայինք Յիսուսի Ա՛նձը՝ որ թափնուած կը կանգնի գիրին և գրականութեան ետին, որպէս Գերագոյն Աղբիւրը աստուածայայտնութեան:

Մեր ուսումնասիրութեան ու մտորումներուն առարկան ըլլալու չէ միայն Ա. Գիրքն ու Աւետարանները, այլ՝ այդ գիրքերուն և բառերուն մէջ թափնուած բարձունքի և վստմութեան Հոգեղէն Մարմնացեալ Անձը, այն Յիսուսը որ ըսաւ, «Ես եմ ճշմարտութիւնը, ոչ թէ *գրաւոր* խօսքը, այլ *կենդանի՛ խօսքը՝ ապրո՛ղ Աւետարանը*»:

Ուսումնասիրող անձ մը պէտք է թափանցէ Յիսուսի՛ կեանքին և Անո՛ր ապրումին, պարտաւոր է միաձուլուիլ Յիսուսի կեանքին, և զգալ ապրումը Միածին Յիսուսի, այնպէ՛ս ինչպէս որ, *Միածինը զգաց մարդ արարածին կենցաղավարութիւնը* երբ ապրեցաւ երկրի վրայ:

Փիլիսոփայելու կամ տեսաբանելու համար չի գրուեցան Յիսուսի խօսքերը: Անոնք գրուեցան որպէսզի բոլոր անոնք, որոնք

կը կարդան Աւետարանները, այդ խօսքերն ու խորհուրդները շարժում մը և կեանք մը ստեղծեն իրենց հոգիներուն և մտածումներուն մէջ: Այդ շարժումը և ոգեւորութիւնը մինչեւ որ ընթերցողին խորհրդածութիւնը և մտածութիւնը կեանքի և վերապրումի չի **փոխակերպէ**, կարելի չէ որ ենթական թափանցէ, ըմբռնէ և հասկնայ Յիսուսի խօսքերուն նշանակութիւնը և իմաստը: Աստուածաշունչի սերտողութիւնը դառնալու չէ՛ մտածողութեան մարզանք, այլ մօտեցում մը, սրբացում մը, որ պիտի առաջնորդէ ուսումնասիրողը աստուածայայտնութեան՝ *հոյսնուրդ հոյիինի*:

Պօղոս Առաքեալ կրցաւ թափանցել Յիսուսի Հոգիին, որովհետեւ կը յորդորէ Փիլիպպեցիները հետեւեալ խօսքերով:

«Ինձի համար՝ ամբողջ Երիստոս է թէ՛ ամբողջութիւնս և թէ՛ մեռնելովս»--Փիլիպ. Ա. 21:

Այս փորձառական ճանաչողութիւնն է, որ ներհուն պիտի դարձնէ հետախուզող ենթական հաւատացեալը, թէ Յիսուս ի՞նչ ըսել կ'ուզէ Իր պատուէր խօսքերովը:

Վերադառնանք մեր նիւթին, տեսնելու համար թէ Օրէնքը ինչպէ՞ս անփոփոխ կրնայ **մ'նայ** ու նաեւ **փոխուիլ**:

Յովհաննէս Առաքեալ, որ Յիսուսի սրտին շատ մօտ կ'ապրէր կ'ըսէ իր աստուածայայտնիչ գրութեան մէջ:

«Օրէնքը Սովսէսի ձեռքով սրուեցաւ, բայց ջնորհը ու ճշմարտութիւնը Յիսուս Երիստոսի ձեռքով եղան»--Յով. Ա.17:

Առաքեալին դրոշմած այս աղամանդեայ համարը կեդրոնացած ճառագայթումով կը պայծառացնէ մեր հասկացողութեան խաւարը, և մեր ըմբռնումի հորիզոնը կ'ընդլայնէ:

Բանինե՞ր մեր մէջ՝ գտնուած են դատարան կամ ունեցած են դատական գործեր: Երբ մէկը դատ մը ունենայ և փաստաբանի դիմէ, փաստաբանը այդ անձին նախ կը հարցնէ, թէ իր դատը՝ անպայման դատարանով կ'ուզէ կարգադրել, թէ *պրտաբոյ ատեանի*՝ այսինքն արանց դատաւորին երթալու, փաստաբանական գրասենեակին մէջ, իրերահասկացողութեամբ լուծել:

Գիտե՞ք ինչու այսպիսի հարցումներ կ'ուղղեն փաստաբանները: Արովհետեւ դատարան երթալը, նախ, շատ սուղ կ'արժէ. յետոյ՝ երկար կը տեւէ, և անգամ մը որ հարցը դատաւորին և Օրէնքին յանձնուի, այդ վեճը ոչ գթութիւն կը ստանայ, ոչ ալ շնորհ: Այսինքն այլեւս այդ հարցը որեւէ **հաշտարար** ոգիով չի

կրնար լուծուիլ, այլ միայն Օրէնքի պահանջներուն լիակատար գործադրումով: Այսինքն, այլեւս «*օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը*» առանց խախտելու, կոտորտելու՝ Օրէնքը պէտք է կիրարկուի:

Արտաբոյ ատեանի կարգադրութեան մասին Յիսուս շատ գեղեցիկ և իմաստալից նկարագրութիւն մը ունի Մատթ. Ե.25 համարներուն մէջ, ուր կը կարդանք.

«Ըն ոսոյսիդ հետ քուտով միաբանէ՛ (դատդ դատարանէ դուրս լուծէ) քանի որ անոր հետ ճամբու մէջ ես-- փաստաբաններու հետ բանակցութեան մէջ ես-- չըլլայ որ քու ոսոյսդ բեզ դատաւորին մասունէ՛, և դատաւորը դահիճին, և քանոր ձգուիս: Եղմարիտ կ'ըսեն՝ Բեզի, պիտի չեղլես անկէ՛ մինչեւ որ վերջին նախարակիտը չվճարենա» (մինչեւ վերջին յովտն ու նշանագիրը գործադրուի):

Ահա՛, սիրելի ընթերցողներ, Օրէնքի «*յովտին և նշանագրին*» չկորսուելուն մեկնաբանութիւնը, որ ինծի հասկնալի և ըմբռնելի կը թուի, խոնարհօրէն:

Օրինակ, բեմական երաժշտութեան ժամանակ, մինչեւ մայեւորոյին գալը, երաժիշտները կը հետեւին *նոթաներու*, իսկ մայեւորոյին գալէն յետոյ, անոնք կը հետեւին մայեւորոյի **ճգոսին**՝ Յիսուսի՛ պատուերներուն:

Դժբախտաբար կարգ մը հաւատացեալ քարոզիչներ, առաջնորդուած իրենց, Աստուածաշունչը փառաբանելու ձգտումէն, կ'ուզեն հաւատալ և ուրիշներո՛ւ հաւատացնել թէ Հին Կտակարանին իւրաքանչիւր բառն ու տառը արձանագրուած է Աստուծոյ կողմէ, և նոյնիսկ ընդօրինակողներն և թարգմանիչներն ալ, այսքան երկար դարերու ընթացքին, չեն փոխած կամ շարժած որեւէ յովտ կամ նշանագիր: Անշուշտ ամէն մարդ ազատ է իր ըմբռնումին և մտածելակերպին մէջ:

**Այժմ իմ ըմբռնումս զիս կը բաւարարէ
վերոյիշեալ համեստ մեկնաբանութեամբ,
որուն համար ջնորհակալ եմ Աստուծոյ:**

**Օգոստոս 24, 1986
Թորոնթօ**